

ԱՐԵՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՒՔ

Ուրբաթ, 12 Հոկտեմբերի, 2007

Միացեալ Նահանգների Կոնգրեսի արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի կողմից Հայոց Ցեղասպանութեան ճանաչմանը վերաբերող թիւ 106 բանաձեւի ընդունումը լայն արձագանք է գտել ամերիկեան զանգուածային լրատուամիջոցներում: Ամերիկեան գրեթէ բոլոր հեղինակաւոր թերթերը, որոնց թւում՝ «Լոս Անջելես Թայմզը», «Վաշինգտոն Փոստը», «Նիւ Եօրթ Թայմզը», «Քրիսչըն Սայնս Մոնիթորը», «Բոստըն Գլաբը» Հոկտեմբերի 11-ի համարում լայնօրէն անդրադարձել են բանաձեւի ընդունմանը եւ վերլուծական յօդուածներ հրատարակել Հայոց Ցեղասպանութեան փաստի եւ բանաձեւի ընդունման հետեւանքով ամերիկա-թուրքական յարաբերութիւնների հաւանական սրման մասին: Նախագահ Բուշի վարչակազմի բարձրաստիճան պաշտօնատարների կարծիքով բանաձեւի ընդունումը կարող է պատճառ դառնալ, որ Թուրքիան փակի այն ուղիները, որոնցով ամերիկեան ռազմաւթերք եւ ռազմասրաքեր են առաքւում Իրաք,- գրել է «Բոստըն Գլաբը» թերթը: Այնուամենայնիւ, թերթը վկայակոչել է Մասաչուսեթսի Հայ Դատի Յանձնախմբի ատենապետ Շարիստան Մելքոնեանին, որն ասել է, թէ, անհեթեթութիւն է կարծել, որ կարելի է որդեգրել անցեալը մոռացող արտաքին որեւէ կարգի քաղաքականութիւն: Ամերիկեան արտաքին քաղաքականութիւնը մինչ այժմ թուրքական կեղծիքների ու ստայոյերի պատանդ է եղել,- նշել է նա:



Հայոց Ցեղասպանութեան ճանաչմանը վերաբերող Կոնգրեսի թիւ 106 բանաձեւին նեցուկ կանգնելու խոստում տուած Ներկայացուցիչների պալատի անդամ Ջէյն Հարմընը Կալիֆորնիայից, անցեալ շաբթուայ ընթացքում ակակնկալօրէն իր կեցուածքը փոխեց եւ նոյնիսկ ժխտական նամակ յղեց Կոնգրեսի արտաքին յարաբերութիւնների հարցերով յանձնախմբի նախագահ Թամ Լանթոսին, պահանջելով, որ բանաձեւը դուրս հանուի օրակարգից: Այս քայլը խստօրէն դատապարտուեց ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի եւ Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան կողմից, որոնք նամակներով, հեռախօսազանգներով եւ անձամբ իրենց բողոքը յայտնեցին կոնգրեսական Հարմընին: Իսկ Շաբաթ, Հոկտեմբերի 6-ին Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան անդամները ներկայ գտնուեցին Լէյքվուդ քաղաքում տեղի ունեցած միջոցառման, որին մասնակցում էր նաեւ Հարմընը, վերջինիս «ուրացող եւ ստախօս» կոչելով: Կոնգրեսական Հարմընի քայլը քննադատուեց նաեւ «Լոս Անջելես Թայմզ» օրաթերթի կողմից, որը Չորեքշաբթի, Հոկտեմբերի 10-ի համարում կոչ արեց կոնգրեսականին, որպէսզի նա հաստատ մնայ Հայոց Ցեղասպանութեան բանաձեւին նեցուկ կանգնելու որոշման վրայ: «Քաջութեան իսկական չափանիշը իրականութիւնը հաստատելն է, նոյնիսկ այն ժամանակ, երբ այդ անելը յարմար չի նկատւում», գրել է թերթը:



Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ Սուշեղ արք. Մարտիրոսեանը, Կրօնական ժողովն ու Ազգային վարչութիւնը եւ յարակից բոլոր միաւորները իրենց գոհունակութիւնն են արձանագրել Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների տան Արտաքին յարաբերութիւնների յանձնախմբի կողմից Հայոց Ցեղասպանութեան ճանաչման թիւ 106 բանաձեւի ընդունման առիթով: Առաջնորդարանի դիւանի հրատարակած հաղորդագրութեան մէջ նշուում է, թէ այս բանաձեւի որդեգրմամբ կարելոր հանգրուան է կերտւում Հայ ժողովրդի արդար պահանջների կենսագործման ճանապարհին:



Անցնող շաբաթավերջին Օրէն Քաունթիի Պատանեկան միութեան «Աղբիւր Սերոբ» մասնաճիւղի ու Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան «Աշոտ Երկաթ» ուխտի անդամները մասնակցեցին Ներկայացուցիչների Տան ներկայացուած Հայոց Ցեղասպանութեան ճանաչման թիւ 106 բանաձեւի վաւերացումը ապահովելու աշխատանքին, նամակներ յղելով կոնգրեսականներին: Միջոցառմանը ելոյթ ունեցաւ Օրէնք Քաունթիի Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչ Արա Մալազեանը:



Միացեալ Նահանգների Կոնգրեսում Գլենդէլ, Փասադենա, Լա Քրասնեթա, Մոնթրոս եւ յարակից շրջանները ներկայացնող կոնգրեսական Ադամ Շիֆը Երկուշաբթի, Յոկտեմբերի 8-ի երեկոյեան ժամը 7-ին Գլենդէլի հանրային գրադարանում կազմակերպել էր յատուկ հաւաք, որի ընթացքում քննարկումներ եւ մտքերի փոխանակումներ տեղի ունեցան Հայաստանի ներկայիս իրավիճակի մասին: Ինչպէս իր բացման խօսքում նշեց կոնգրեսական Շիֆը, միջոցառումը միտում էր առողջ քննադատութեամբ անդրադառնալ Հայաստանի ձեռքբերումներին ու բացթողումներին: Քննարկումներին իրենց մասնակցութիւնը բերեցին հայ եւ ամերիկացի փորձագէտներ, որոնք հիմնականում ծանրացան Հայաստանի հարկային համակարգի, տնտեսական եւ քաղաքացիական ոլորտի, մասնաւորաբար դատաիրաւական ու արդարադատական բնագաւառների վրայ: Խօսելով Հայաստանի հարկային խնդիրների մասին, կոնգրեսական Շիֆը մտահոգութեամբ անդրադարձաւ եկամտահարկ վճարելուց խուսափելու Հայաստանում տիրող ընդհանուր մտայնութեանը:

**Այս լուրերը տրամադրուած են
ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467**

**Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել:**